ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. աղբահանում հոդվածով պլանավորվել է 86000.0 հազար դրամ եկամուտ 2023թ-ի 69000.0 հազար դրամի դիմաց: Աճը պայմանավորված է Արցախից բռնի տեղավանված անձանց հետ, և նախորդ տարիներից գոյացած ապառքների հավաքագրման պլանավորմամբ: 2024թ. փաստացի հավաքագրվել է 66930.2 հազար դրամ 2023թ-ի 60505.7 հազար դրամի դիմաց: Հավաքագրման աճը կազմել է 6425.0 հազար դրամ, կամ 10.6% 2023թ-ի համեմատությամբ:

2024թ-ի աղբահանության հոդվածով հատկացվել է 87000.0 հազար դրամ, 2023թ-ի 77140.67 հազար դրամի դիմաց:

2023-2024թվականներին նշված հոդվածով ֆինանսավորումը իրականացվել է 100%-ով:

Համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական *Վ. Չիլինգարյան*

10.03.2025թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ Է« 10 » 03 2025թ.
Մուտք N 1004 Թերթ N 01

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտների հավաքագրման 2024, 2023 թվականների տվյալներից պարզվում է, որ 2024 թվականին վարչական բյուջեի ***գույքային հարկեր անշարժ գույքից*** եկամտատեսակի տարեկան փաստացի եկամուտը 2023 թվականի համեմատությամբ աճել է 30767,8 հազ. դրամով, որը պայմանավորված է ՀՀ Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ կետի /2024թ. հաշվետու տարվա համար 50 տոկոս/, իսկ գույքային հարկեր այլ գույքից՝ ***գույքահարկ փոխադրամիջոցների*** համար եկամտատեսակի գծով հավաքագրված տվյալներից երևում է, որ 2024 թվականի գույքահարկ փոխադրամիջոցներից եկամտատեսակի փաստացի հավաքագրումը 2023 թվականի գույքահարկի փաստացիի համեմատությամբ նվազել է 20152,1 հազ. դրամով,որը պայմանավորված է ՀՀ ներկրված տրանսպորտային միջոցների, դրանց օտարման գործարքների քանակով:

Տեղական տուրքերի 2024, 2023 թվականների բերված տվյալներից երևում է, որ 2024 թվականի տեղական տուրքի փաստացի հավաքագրումը 2023 թվականի համեմատ աճել է 5639,0 հազ. դրամով, որը պայմանավորված է համայնքի տարածքում իրականացվող շինարարության ծավալների ավելացմամբ և շինարարության համար նախատեսված տեղական տուրքերի դրույքաչափերի ավելացմամբ:

Այլ եկամուտներ եկամտատեսակի ***գույքի վարձակալությունից եկամուտների*** գծով 2024, 2023 թվականների բերված տվյալներից երևում է, որ 2024 թվականին հավաքագրված եկամուտները 2023 թվականի համեմատությամբ նվազել է 10775,8 հազ դրամով, որը պայմանավորված է հողամասերի սեփականաշնորհման գործարքների, ինչպես նաև նախորդ տարիների ապառքների գանձմամբ:

Առ. սպ. եկ. հաշվ. և հավաք. բաժնի պետ՝ **Վ. Բարսամյան**

Քաղ. ճարտ. գյուղ և բնակկոմ. բաժնի պետ՝ **Բ. Բալբաբյան**

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ է՝ «10» 03 2025թ.
Մուտքագրման № 1000 Գրանցման № 04